

ՏԻԳՐԱՆ ՍԻՄՅԱՆ

բանասիրական գիտ. թեկնածու

ՎԱՏԱՆ ՏԵՐՅԱՆԸ ՆԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ «ՃԱՐՏԱՐԱԳԵՏ»

1.0. Այս հոդվածում կփորձենք Վահան Տերյանի հրապարակախոսության ու հոգ-վածների հիման վրա ներկայացնել մտավորականության դերն ու նշանակությունը եւ նրանց մոդեռնացման տերյանական ըմբռնումը:

Ինչո՞ւ են ընտրված հատկապես Տերյանի տեքստերը: Նախ՝ նրա հրապարակախոսությունը չի կորցրել իր արդիականությունը մինչ օրս, երկրորդ՝ համահունչ է եւրոպական համատեքստին, ինչն էլ հիմք է տալիս մեզ այս հոդվածում տեղ հատկացնելու նրա կարեւորագույն գաղափարներին:

Նայագիտության մեջ տերյանական՝ վերը նշված տեքստերը հիմնականում քննվել են *Խրրեւ համարեքստի, տվյալ ժամանակաշրջանի արդյունք*, իսկ մենք կփորձենք դիտարկել *Խրրեւ հայ իրականությունը նորովի ձեւավորող, մոդելավորող, որում մշակույթը, գրականությունը, մտավորականությունը պիտի հանդես գա անբողոքությամբ նոր որակով*: Այս այլ խոսքերով ասած՝ նրա *կոնստրուկտիվիստական* մոտեցումից ու քրամաբանությունից է բխում խորագիր դուրս բերված «Տերյանը ճարտարագետ» բառակապակցությունը:

Ակադ. Նրանու Թամրազյանը Վահան Տերյանի «Նայ գրականության գալիք օրը» հոդվածի մասին գրում է, որ այն «մինչ օրս չի կորցրել ներքին կարեւոր խորհուրդը, իր ուժը մասնավորապես ստանում է նշանակալի անկումների ու վերելքների պահերին»¹: Ընթերցելով, որ Տերյանի երկու հոդվածները («Նայ գրականության գալիք օրը», «Նոգեւոր Նայաստան») ավելի նշանակալից են դառնում *հասարակական-քաղաքական եւ մշակութային* անցումների, *անկումների* ժամանակ, բայց ոչ վերելքների. դրանցում արժարժված գաղափարները մշակութային վերելքի ժամանակ կվերածվեն պարզապես գրապարմական իրողության, մինչդեռ մշակութային անկումների ժամանակ կարող են նպաստել մշակույթի մոդեռնացմանը (վերելքին): Նակված ենք կարծելու, որ տերյանական գաղափարները դեռեւս իրականացված չեն մեզանում:

Նայագիտության մեջ տերյանական երկու տեքստերի («Նայ գրականության գալիք օրը» (1914), «Նոգեւոր Նայաստան» (1914)) համատեքստը, քրամասույթը բավական հանգամանալից են ներկայացված Մարինե Սարգսյանի, Դավիթ Պեպրոսյանի աշխատանքներում², ուստի այդ խնդրին մենք գրեթե չենք անդրադառնալու: Մեր այս վերլու-

¹ Նրանու Թամրազյան, Վահան Տերյան, Երևան, 1985, էջ 145:

² Այս մասին մանրամասն տես **Սարգսյան**, Վահան Տերյանի «Նոգեւոր Նայաստան» պարամափիլիսոփայական հայեցակարգը. «Պարմա-բանասիրական հանդես», 2004, թ. 3, էջ 77-98. **Դ.**

ծության փորձը կողոպտի ցույց տալու, թե Տերյանը մտավորականների (=ինտելիգենտ) ինչպիսի տեսակներ է առանձնացնում, եւ ինչ դեր պիտի խաղա մտավորականը եւրոպական մոդելի հասարակություն ու մշակույթ կերպելու համար:

Տերյանի հասարակական, մշակութային պահվածքի (հարիւրուս) կարևորագույն շարժառիթները *զգացմունքն* ու *բանականությունն* են («Բմ խորին համոզմունքով, ոչ մի գործ չի կարող կատարվել առանց զգացմունքի: Առավել եւս հասարակական գործը: Սակայն, վերջին դեպքում (երբ գործը հասարակական է), ավելի, քան որեւէ այլ ժամանակ, բանականությունը պէտք է ընթանա զգացմունքի հետ ձեռք-ձեռքի տված»³):

1.1. Նին կամ ծխական մոդելի մտավորականը՝ ըստ «Նայ գրականության գալիք օրը» հոդվածի

Փորձենք բնակ, Տերյանի ինտելիգենտ բառի բովանդակային պլանը, նրա տեսակները:

Ինչպես հայտնի է, «ինտելիգենտ» բառը կարող է թյուրըմբռնման տեղիք տալ: Յավոք Տերյանը չի սահմանում, թե ում է համարում ընդհանրապես ինտելիգենտ, բայց շաքարանքից կարող ենք ենթադրել, որ նա, ինտելիգենտ ասելով, նկատի ունի կրթված մարդկանց: Մտավորապես այս իմաստով էր օգտագործվում նույն բառը 1910-ական թթ. Ռուսաստանում, քանի որ տերյանական «ինտելիգենտ» բառի գործածումը համընկնում է Դալի բացատրությանը⁴:

Նշենք, որ Տերյանի համար ավելի նախընտրելի է «ինտելիգենտ» բառը մտավորականի փոխարեն⁵: Մենք դրա փոխարեն կօգտագործենք «մտավորական» բառը: Տերյանի «Նայ գրականության գալիք օրը» ծրագրային հոդվածներում հիմնականում հանդիպում ենք «ծխական ինտելիգենցիա» եւ «ազգային ինտելիգենցիա» բառակապակցությունների, իսկ «Նոգեւոր Նայաստան» գեկույցում՝ «բուրժուական ինտելիգենցիա» եւ «ազգային ինտելիգենցիա»:

Տերյանի՝ 1914-ին Թիֆլիսում կարդացած «Նայ գրականության գալիք օրը» դասախոսություն-հոդվածում բնադարձվում են «ծխական ինտելիգենցիան» եւ նրա ձեւավորող հայ դպրոցը: Ծխական ինտելիգենտը, փաստորեն, համայնքի «մտավորականն» է, որն ըստ Տերյանի՝ հին մոդելի, հին սերնդի մտավորականության ներկայացուցիչն է: Նա անմրցունակ է հասարակական կյանքում, «նրա քաղաքական աշխարհայացքը ծխական գործերից այն կողմ չի անցնում, նրա քաղաքական ասպարեզը դպրոցն ու եկեղեցին են, հոգեկան աշխարհն ամփոփված է այս եկեղեցի մեջ...: Նրա՝ ազգային կոչված իդեալները կապված են այդ ծխական ու թեմական դպրոցի ու եկեղեցու հետ, դրանից

⁴ **Գեորգյան**, Գրական բանաձևերը 20-րդ դարակերպի հայ մամուլում, Երևան, 2007, էջ 175-189, 333-355:

³ **Վահան Տերյան**, Երկերի ժողովածու (չորս հատրտով), Կ. 3, Երևան, 1975, էջ 230:

⁴ Интеллектуальный лат. Духовный, умственный, разумный. Интеллигенция (в знач. собир.) разумная, образованная, умственно развитая часть жителей (Даль, Толковый словарь, Т.2, И-О, С.-Петербург, 1881, с.46).

⁵ **Վահան Տերյան**, Երկեր (Բանաստեղծություններ, գրականագիր. հոդվածներ, նամակներ), Երևան, 1989, էջ 318: Բոլոր հաջորդ մեջբերումները կատարելու ենք այս գրքից, փակագծերում նշելով հոդվածի վերնագիրը եւ էջը:

դուրս նա չի կարողանում ուրիշ գոյություն ու կյանք պարկերացնել հայ մարդու համար» («Նայ գրականության գալիք օրը», էջ 300): Տերյանն իրավացի է, այսպիսի միջավայրը չի կարող տալ լայն մտածողության ունեցող մտավորական, որն ի վիճակի լինի ստեղծելու երոպակականին հարիւր մրցունակ մշակույթ, գրականություն: Տերյանը քննադատում է հին սերնդի կամ «ծխական ինտելիգենտի» սեմինարիստական-ծխական մտածողությունը ու դրանից ծնված գրական-քննադատական մեթոդն այն պարճառով, որ այդ մեթոդը գովաբանում է ազգային ուրիշիտարիզմը, ինչի հասկությունը վուլգարիզմն է (անդ, էջ 300):

Մտացվում է, որ կղերական միջավայրից դուրս է գալիս աշխարհիկ կիսամտավորական, որն իր մտածողությամբ չի տարբերվում «սեմինարիստական-ծխական ինտելիգենցիայի աշխարհայացքից» (անդ, էջ 300): Ինչպես նկատում ենք, տարբեր են հին ու նոր մտավորականության գրականության գնահատման, վերլուծման չափանիշները: Տերյանը քննադատում է Լեոյին, քանի որ նա գրական կերպարներից սպասում է միայն բարոյական պահվածք, նկարագիր (անդ, էջ 304-305): Այլ խոսքով՝ Տերյանի՝ Լեոյին ուղղված քննադատության հիմքն այն է, որ Լեոն գրական երկերը դիտարկում է իբրև *նորմատիվ*, այլ ոչ դեկորատիվ (նկարագրական) իրողություն, այսինքն՝ կերպարները, նրանց բարոյական գծերը պետք է քննվեն իբրև *որված իրողություն*, այլ ոչ այնպիսին, ինչպիսին պետք է լինեն: Նույն սա է պարճառը, որ Տերյանը Լեոյի մասին գրում է. «Դուք (դասախոսության լսողներ, ընթերցողներ՝ Տ.Ս.) կարծում եք Լեոն կենդանի՞ է: Ես հավատացնում եմ ձեզ, որ նա մեռած է մեռած է վաղուց» (անդ, էջ 304):

Ինչպես նկատում ենք, Տերյանը պահանջում է, որ պիտի տեսնվի մտավորականության սերնդափոխություն: Սերունդների միջև (օր.՝ Տերյան/Լեո, Տերյան/Պոռշյան, Տերյան/Պարկանյան եւ այլն) արժեքանական բախումը շոշափելի է, առկա է գրականության կերպման ու մեկնաբանման հսկայական տարբերություն, այդ իսկ պարճառով երկու սերունդների մտավորականները «չեն կարողանում միմյանց ըմբռնել, ...հիվանդոտ թափով են հարձակվում իրար վրա, երբեմն տարօրինակ ձև է ընդունում նրանց պայքարը» («Նայ գրականության գալիք օրը», էջ 291): Տերյանը բավական խորն է տեսնում հին ու նոր սերունդների բախման ակունքները: Ըստ նրա՝ արժեքանական համակարգի ձեւավորման առումով մեծ դեր ունի *դպրոցը*:

Ավելացնենք, որ մարդու կայացման գործում մեծ դեր ունի ոչ միայն դպրոցը, այլև համալսարանը, ինչը 1914-ին տակավին գոյություն չուներ: Այս երկու կրթական ինստիտուտները *ձեւավորում* ու *կրթում* են նոր մտղելի մտավորականություն: Այս «խողովակով» դուրս եկած մտավորականն իր հերթին պետք է շարունակի զբաղվել *ինքնակրթությամբ ու ինքնադաստիարակությամբ*: Այլապես մտավոր-ինտելեկտուալ զարգացման բացակայությունը հանգեցնում է մտավորականի լճացման:

Ինչպես տեսնում ենք, Տերյանի՝ դպրոցի բարեփոխման ցանկությունը խոսում է նրա *մոդեռնիստ* (=բարեմոդեռնիզ) լինելու մասին. «Քանի որ կղերը դեր ունի *ժողովրդական դպրոցում*, միշտ պետք է կասկածով եւ երկյուղով վերաբերվեմ դեպի այդ դպրոցը, ...կղերը հովանավորում ու սնում է այդ սեմինարիզմը» (անդ, էջ 296): Եզրակացնենք,

որ Տերյանը պայքարում է հայ իրականության մեջ առկա սքոլաստիկ, դոգմատիկ, սեմինարիստական-փրագմատական մտածողության դեմ (անդ, էջ 296-297), որը բուծում է «կիսակիրթ, կիսագրագետ մի մասսա, որն այս կամ այն չափով աշակերտական նստաբանից փոքրվում է կղերական մտածողությամբ, կրթվում է մեր կղերի սրբին մոտիկ մեթոդով և ուղղությամբ» (անդ, էջ 298): Ստացվում է, որ դարասկզբի դպրոցներից չի կարող դուրս գալ նոր մոդելի մրավորական:

Այս առումով հեղափոխական է Ն. Մաննի միտքը Զոլայի՝ Ֆրանսիայում խաղացած դերի մասին. «Դպրոցի ընդարձակումը ու անջատումը եկեղեցուց, պետության ու բանակի մաքրումը, սոցիալական ապահովությունը, հարկահանությունը, հարգանքը աշխատանքի նկատմամբ արդեն իրական հանրապետությունը իր մասին զգացնել է պալիս»⁶: Ինչպես նկատում ենք, Տերյանի պայքարը նախահիմք կարող էր դառնալ հանրապետություն կերպելու համար, հայ ժողովրդի պատմության ընթացքը բավական երկար ժամանակ այլ հունով է ընթանում:

1.2. Եւրոպական մոդելի կամ նոր մոդելի մրավորականը

Ըստ Տերյանի՝ մրավորականը կարող է լինել մրցունակ, եթե կանգնած լինի եւրոպական մշակույթին հավասար, իսկ դա հնարավոր է միայն այն դեպքում, երբ մեր մշակույթը թոթափի ծխական, սքոլաստիկ, դոգմատիկ մտածողությունը: Իսկ թանի դեռ «մեր ազգային հորջորջվող ինտելիգենցիան ապրում է մի ինքնամիտի ու մեկուսացած կյանքով, որոճում է ինչ-որ միջնադարյան գաղափարներ կամ մի բանալ ու պարզամիտ ազարամություն, որ լի է ֆիլիստերությամբ, որ հիշեցնում է եւրոպական կղերի զգվելի ու կեղծ ազարամությունը» («Նայ գրականության գալիք օրը», էջ 306):

Կարևոր է նաև հասկանալ, թե ինչ արժեքներ, րեսություններ էին սնում Տերյանին վերանայելու հայ գրականությունն ու մշակույթը: «Տերյանի կուլտուր-պատմական րեսությունը, - գրում է Ս. Սարինյանը, - սնուող էր առնում ազգերի համաշխարհային գործակցության նորագույն պարկերացումներից և մարդկության բարեկրթության գործում արվեստի ու գրականության դերի այն ըմբռնումից, որ առաջադրում էին գեղագիտական նորագույն դպրոցները: Ըստ այդ պարկերացման, ազգերի գալիք համերաշխությունը այլ հարաբերության մեջ է առնում մեծ ու փոքր ժողովուրդներին, պատմական իրավունք վերապահելով նրան, որ իր արժեքներ է սրելոծում արվեստի համամարդկային գանձաբանում: Այս րեսությունը մի առանձին ոգեւորություն էր պարճառում փոքր ժողովուրդների գաղափարախոսներին, որոնց համար պարզապես հայրնություն էր՝ րնրեսական ու բաղաբական անկախությունից դուրս որոնելու ինքնություն գոյության մի այլ երաշխիք»⁷: Անշուշտ այս գործոնը առկա էր, բայց նրա մղումը «հայկական աշխարհի» հեղամնացությունը հաղթահարելու մեջ էր:

Ըստ էության, Տերյանն ուզում է, որ մեր մրավորականը հաղորդակից լինի եւրո-

6 **Маян, Генрих.** Золя, с. 221 // **Маян, Генрих.** В защиту культуры. (Состав. и предисл. Г. Знаменской), М. .

7 **Ս. Սարինյան,** Վահան Տերյան, էջ 452 // Նայ գրականության պատմություն, հ. 5, Երևան, 1979:

պական մշակույթին, ինչը նրան հնարավորություն կտա մտածել *ազգային* մշակույթ (և *ոչ թե համայնքային*) սրեղծելու մասին: «Միայն կուլտուրական ազգը,- գրում է Տերյանը,- կարող է մտածել ազգային կուլտուրա ունենալու մասին, միայն իսկական ինքնիզեցիան կամ մտավորականությունը, ինչպես ասում են այժմ, կարող է սրեղծել կուլտուրա» (անդ, էջ 305-306): Սրացվում է, որ Տերյանը կողմ է հայ հասարակության կյանքում լուրջ բարեփոխման, ինչն էլ կնպաստի մտածելակերպի, մշակութային ու արժեքական փոփոխությունների: Սա փելի է ունենում 1920-ական թթ., երբ հիմնադրվում է Երևանի պետական համալսարանը, որտեղ սկսում են դասավանդել արհեստագործական կրթություն ստացած անվանի գիտնականներ (Ն. Մանանդյան, Մ. Աբեղյան, Ս. Մալխասյան, Հր. Աճառյան և այլն): Հայ մշակույթի զարթոնքին նպաստում է քաղաքի (Ա. Թամանյան), քաղաքային մշակույթի ձևավորումը: Բայց հեղափոխականն այն է, որ 1950-ականները հիմք են տալիս Պ. Մուսկին տրեյանական չափանիշները երևան հանելու, հիշելու համար:

Պ. Մուսկը իր «Տերյանը պահանջում է» հոդվածում գրում է. «Չպետք է մոռանալ, որ ինչպես գիտության, այնպես էլ գրականության զարգացումը ընդհանուր-համաշխարհային բնույթ է կրում: ... Ժամանակակից հայ վիպասանը իր վեպը գրելիս պիտի ելնի այդ ժանրի զարգացման այսօրվա աստիճանից, որ պարտադիր է ինչպես հայի, այնպես էլ, դիցուք, ֆրանսիացու կամ իսպանացու համար: Գրական երևույթներն էլ իրենց իսկական արժեքն ստանում են գրականության *ընդհանուր* զարգացումը կշռող նժարների վրա, ինչպես որ, կոպիտ համեմատած, որքան էլ տարբեր ու բազմազան լինեն «ազգային շուկաները»՝ գոյություն ունի «համաշխարհային» գին»⁸: Ինչպես նկատում ենք, Մուսկի չափորոշիչները համընկնում են տրեյանականին. նրանք նույն չափորոշիչներով են մոտենում հայրենի գրականության զարգացմանն ու մոդեռնացմանը:

Տերյանը պայքարում է նաև հայ գաղթօջախների ծխական կյանքի փոփոխության համար: Ըստ Տերյանի՝ «Ռուսաստանի ամեն մի հայ գաղութ - դա նույն գավառն է, նույն հեղափոխական վայրը, ուր ամեն ինչ ներփակված է ընդհանրական շրջանում, ուր գրեթե գոյություն չունի որևէ հասարակական կյանք: Մի որևէ բուրժուական փոփոխությունը կամ մահը ավելի մեծ հեղափոխություն է շարժում, քան ամենակարևոր ու նշանակալից հասարակական երևույթ» («Մոսկվա, դեկտեմբերի 12-ին», էջ 256): Ինչպես տեսնում ենք, համայնքային այսպիսի մտածողության համար գերաբեռն են ընդհանրաբար, բամբասանք, կանխարեսելի կարծրափայլային բաժանաճառները, այնինչ Տերյանը նշում է *հասարակական* կարևորությունը: «Մեր ազգային ինքնիզեցիան,- գրում է Տերյանը,- ինչպես որ քաղաքական կյանքից փախել է ծխական ժողով, լայն պետությունը թողած մտել է եկեղեցու բակը, նույնպես կուլտուրան թողած՝ որոճում է ինչ-որ կղերական ազգամուլ գաղափարներ, անիմաստ մտքերով է կերակրում իր ընթերցողներին...» («Հայ գրականության գալիք օրը», էջ 306):

Հայ մշակույթը երոտականին հասցնելու համար նոր մոդելի մտավորականը պետք

8 Պ. Մուսկ, Երկերի ժողովածու: 3 հատորով, հ. 3, Երևան, 1983, էջ 138-139:

է հաղորդակից լինել «ժամանակի երոպական կուլտուրայի ասպիճանին» (անդ, էջ 307): Ըստ Տերյանի՝ երոպական մշակույթը կարող է կերպրել ռուսախոս մրավորակա-նությունը, քանի որ «նա ավելի շար է կապված ընդհանուր պեպական կյանքի հետ, նա ավելի քաղաքացի է, նա ավելի կուլտուրական է: Միայն կուլտուրական ազգը կարող է սրելով ազգային կուլտուրա» (անդ, էջ 307): Ինչպես նկատում ենք, Տերյանը հստակ գաղափարում է *հասարակության մեջ ապրող մրավորականին*, համայնքում ապ-րող «ծխական ինտելիգենտի» կամ իրենց «ազգային ինտելիգենցիա», «ազգային ին-տելիգենտ» հորջորջողներից, որոնց համար «մեծ վերապահությամբ կարելի է գործածել այդ տերմինը» (անդ):

Փաստորեն, «ազգային ինտելիգենտները», որոնք իրականում «ծխական ինտելի-գենտներ» են, չեն կարող համարվել իսկական ազգային ինտելիգենտներ, մրավորա-կաններ, քանի որ ի վիճակի չեն կերպրելու երոպականին համարժեք ազգային մշակույթ: Ըստ Տերյանի՝ ռուսախոս մրավորակաությունն այն ժամանակ կմիավորվի ազգա-յին մշակույթին, եթե այն իրականում ազգային մշակույթ դառնա: Այսինքն՝ ազգային մշակույթը կերպրում է հասարակական և ոչ թե համայնքային հարաբերությունների համապետություն: Տերյանն ըստ էության հարուցում է այնպիսի պահանջ, որն իրագոր-ծելի է միայն արդյունաբերական («ժամանակակից», «գարգացած») հասարակության պայմաններում: Պարմությունը ցույց տվեց, որ արդյունաբերական հասարակություն-ներն ունեցան *ազգային պետություններ*, որոնց կառավարությունները կարողանում են բազմաթիվ մարդկանց արդյունավետ կառավարել, ինչի հիմքում դրված է օրենքի գերակայությունը: Արդյունաբերական պետություններում մարդկանց մեծ մասը (90%) ապրում է քաղաքներում, աշխատում է գործարաններում, ֆաբրիկաներում⁹: Մոտավորապես այսպիսի իրավիճակ սրելով է միան Խորհրդային Նայաստանի տարիներին, իսկ 1914-ին դրա մասին խոսելն ավելորդ էր:

Փաստորեն, սրացվում է, որ երոպական չափանիշներով (օր.՝ Ֆրանսիայում, Անգլիայում, Գերմանիայում) *ազգային մրավորականություն* հնարավոր չէ կերպրել առանց ազգային պետության: Ուստի տերյանական գաղափարներն անիրականաբար լին և ուղղված էին դեպի ապագա:

1.3. Նոր մոդելի մրավորականի կայացման բաղադրիչները (մեթոդ)

Որպեսզի ձևավորվի նոր մոդելի մրավորականը, հարկավոր է մրաժողությամբ «բաց» մրավորական, որ կարողանա երոպական արժեքները, տեսությունները ներ-կայացնել և համադրել հայ կյանքի հետ: «Երբ հայ ազգային ինտելիգենտը,- գրում է Տերյանը,- տեղեկություն է ստանում մի որևէ երոպական գաղափարի մասին, նա չի աշխատում ըմբռնել սխալներ, նա առանց այլևայության հարմարեցնում է այդ գաղա-փարը իր ավանդական տիրացուական մրաժողությանը և հաշտ կերպով ապրեցնում է իր մեջ այդ երկու բոլորովին տարբեր աղբյուրներից բխող տարբեր գաղափարներ» (անդ, էջ 306): Նշենք, որ տեսությունների ներայնացումը բավական

9 Энтони Гидденс, *Социология* (изд. 2-ое, вып. по 4-ому английскому изданию, полностью переработанному и дополненному), М., 2005, էջ 44-45:

չէ մոդեռնիստ, բարեկրթագող դառնալու համար: Ներայնացված գիտելիքը պետք է *դե-դայնացվի, հարմարեցվի* հայ իրականությանը: Այս գործընթացը ապահովելու համար հարկավոր է ունենալ *վերլուծական միտք* և *համադրելու* ունակություն:

Տիրացուական-սեմինարիստական կրթական ինստիտուտները չեն կարող ձեռավորել նման գիտնական: Տերյանը դեռևս «Ալեքսանդր Ծափուրյան» (1912) հոդվածում անդրադարձել է այս խնդրին, որ «մեր ինտելիգենտը սովորաբար աշակերտի պես անգիր է սերտում զանազան թեորիաներ՝ առանց նոցա խորքը թափանցելու և ոգին ըմբռնելու և թեորիան բարացած ֆորմուլ դարձրած, մտքեւում է մեր կյանքի բոլոր երևույթներին և մի հարվածով ամեն ինչ ոչնչացնում - ինչպես ասում են՝ հոնքը շրկելու փող աչքն էլ է հանում» («Ալեքսանդր Ծափուրյան», էջ 284): Այս անմեղմորեն կիսամտավորականին Տերյանը հակադրում է նոր մոդելի հայ մտավորականին, որը մտք է «*ռուս առաջավոր դեմոկրատ ինտելիգենցիային* (ընդգծումը՝ Վ. Տ.) նույն իդեալներով է ապրում և նույն իդեալն ու ձգվումներն ունի: ... նրա գեղարվեստը լինելու է այն գեղարվեստը, որ գեղարվեստ է ամեն երկրում և ամեն ժողովրդի համար, այսինքն՝ իսկական գեղարվեստ է ոչ սուրբագալ: Այդ ինտելիգենցիան հակառակ է գեղարվեստական այս սակավապետության, որ սնվել է մեր իրականության մեջ, ուր պրոպոկտը վեպի փող է անցնում, անխմսաբ բամբաստանությունն ու չափածո սնախոսությունը՝ պոեզիայի փող: Այդ նոր գեղարվեստը չպիտի եր մնա երոպական գեղարվեստից, չպիտի միսիթարե իրան սին ինքնահավանությամբ և ինքնագոհ ծուլությամբ, նա պիտի ընդգրկե ամենալայն հորիզոնները: Նա չպիտի ջոկե բանաստեղծական և անբանաստեղծական նյութեր - նրա համար ամբողջ աշխարհը, ինչպես և ամբողջ մարդը պոեզիայի նյութ են լինելու: Նրա համար չպիտի լինի հեղին և հրեա, որովհետև իսկական գեղարվեստը համամարդկային է, նույնքան համամարդկային է և ազատ, որքան և միտքը, գիտությունը: Որովհետև իսկական գեղարվեստի համար կարևորը ոչ թե հագուստն է, արտաքինը, այլ ներքինը, հոգին» (, «Նայ գրականության գալիք օրը», էջ 329-330):

Բացի այդ, Տերյանի հիշարարկած մեթոդի գաղափարը խոսում է այն մասին, որ նա ուզում է փոխել մեթափիզիկ (մեթոդ). առանց մեթափիզիկ փոփոխության չի կարող ձեռավորվել նոր մոդելի մտավորական: Վերջինս իր հերթին պիտի ձերբազատվի «*տրե-խային*» մտածողությունից, ինչն իր հերթին կնպաստի անցում կատարելու *համայնքային կյանքից հասարակականի*, որպեսզի հարաբերությունները անհամեմատ ավելի բարդ են: Դա է պարզապես, որը Տերյանը գրում է. «Կղերական համայնականությունից դուրս հայ ինտելիգենտը մեռած, անպարք է դառնում, նա անելիք չունի: Միայն այդպեղ, ծիսական համայնքի մեջ ընկնելով է, որ նա իրեն իսկույն լավ է գգում, ի՛նչ այնպես - ինչպես ձուկը ջրում» (անդ, էջ 299-330):

Փաստորեն, Տերյանը պահանջում է մտավորականության այնպիսի փոխակ, որը կարողանա լինել գործուն նաև հասարակական կյանքում: Բարդ հասարակական կյանք ու հարաբերություններ կերպելու գործում մեծ դեր պիտի ունենա հենց մտավորականությունը: Այս գաղափարը բացահայտ կերպով ձեռակերպված չենք հանդիպում արևմտական դարձողություններում, բայց կարելի է բխեցնել:

1.4. «Ազգային ինտելիգենցիա» // «Բուրժուական ինտելիգենցիա» հակադրությունը՝ ըստ Տերյանի «Նոգևոր Նայասարան» հոդվածի

«Նոգևոր Նայասարան» հոդվածում արդեն կարելի է տեսնել մտավորականության, ինտելիգենցիայի տերյանական երկու բաժանում՝ «ազգային ինտելիգենցիա» և «բուրժուական ինտելիգենցիա»: Այս հոդվածում «ազգային ինտելիգենցիա» բառակապակցությունն այլևս չի մարմնանշում կեղծ ազգային մտավորականությանը, ինչպես «Նայ գրականության գալիք օրը» հոդվածում. այսօր այն նոր մոդելի մտավորականության ցուցիչն է: Ըստ հոդվածագրի՝ ազգային մտավորականությունը երոսական արժեքական համակարգի կրողն է և ազգային մշակույթի կերպողը. («ազգային ինտելիգենցիան պարզ կերպով առաջադրել է ազգային կուլտուրական ապագայի հեռանկարը» («Նոգևոր Նայասարան», էջ 340):

Իսկ ինչ վերաբերում է «բուրժուական ինտելիգենցիային», ապա տերյանական տերթափք կարելի է հասկանալ, որ նրանք չեն տեսնում «ազգային ոգու գոյությունը», վերջինս «ամենախռճոր մասով ու ամենագործոն մասով ապագայնացած է: Դա մի անժխտելի փաստ է» («Նոգևոր Նայասարան», էջ 341): Սրացվում է, որ «բուրժուական ինտելիգենցիան» չունի «մենքի» գիտակցում, որի հիմքն է լեզուն, գրականությունը, արվեստը. «Նրա՝ *այդ (այս և մյուս շեշտադրումները Տերյանին են. - Տ. Ս.)* ինտելիգենցիայի համար բնավ գոյություն չունի հայ կուլտուրա առածը: Նա միանգամայն անտեղյակ է այդ կուլտուրայի գլխավոր գործոններին - լեզվին, գրականությանը, արվեստին - այն ամենին, ինչ մի ազգի կուլտուրան բնորոշ հատկանիշներն են կազմում:

Նա ոչ միայն անտեղյակ է, այլ կամք չունի տեղյակ լինելու, ավելին կասեմ, *աքիսմաքիում է* այդ ամենը» («Նոգևոր Նայասարան», էջ 341): Տերյանի «բուրժուական մտավորականությունն» էությանը մոտ է զանգվածային մարդուն, որը կարող է ունենալ կրթություն, բայց անընդունակ լինել հասարակական դեր կատարելու: «Բուրժուական մտավորականության» զանգվածային մրաժողությունը Տերյանը քննադատում է նրա մի ներկայացուցչի բաղձանքը հնչեցնելով: Տերյանի և այդ «հայ ինտելիգենտի» գրույցի ժամանակ, վերջինս պարասխանում է, թե երագում է, որ Նայասարանն ազատագրվելուց հետո տեսնի հայ ոստիկանի՝ հայկական համագգեստով («Նոգևոր Նայասարան», էջ 341): Տերյանական արժեքական համակարգում մեծ տեղ ունեն հայ մշակույթը, գրականությունը, արվեստը, գիտությունը, այլ ոչ թե ոստիկանը. «որն իրանից կաշառք է պահանջում կամ որն իրան ծեծում է» («Նոգևոր Նայասարան», էջ 341):

«Բուրժուական մտավորականությանը» հասցված մյուս հարվածն իջնում է հետևյալ փաստի հիշարակմամբ, թե «ինչու մինչև օրս հավաքված չի այն չնչին գումարը, որով պիտի կանգնեցնեն Խ. Աբովյանի անձանը Երևանում: Մի՞թե Արարադյան դաշարը Նայասարան չէ և նրա որդին՝ Աբովյանը, այդ Նայասարանի ամենալուսեղեն մի բեկորը չէ:՝ Որպիսի Նայասարան եք ուզում կառուցել դուք, որ չեք ուզում ճանաչել այդ հոգեղեն Նայասարանը» («Նոգևոր Նայասարան», էջ 344):

Ըստ Տերյանի՝ «ազգային մտավորականը» պարասխանաբար է սեփական մշակույթի կերպման ու ներկայացման համար: Պարասխան չէ, որ Տերյանն իր «Արջի ծա-

ռայություն» (1915) հոգվածում քննադատում է Մոսկվայի հայ ուսանողական բյուրոյի այն հայրաբարությունը, որպեղ նրանք խնդրում էին «բոլոր ցանկացողներին ուղարկել իրանց հոգվածները բյուրոյին՝ զեպեղելու համար ռուսական մամուլի օրգաններում» («Մշակ», 1914, թ. 281): Նոգվածագիրների նպատակն էր ծանոթացնել ռուս հասարակությանը Նայաստանի անցյալին եւ ներկային: «Այս գործի համար,- գրում է Տերյանը,- որ եւ՛ կարեւոր է, եւ՛ այժեական, հարկավոր են ավելի կարող եւ փորձառու ուժեր եւ ավելի հեղինակավոր մարմին, որը, իհարկե, կարիք չի ունենա դիմելու «բոլորին, ով ցանկանում է»» («Արջի ծառայություն», էջ 353):

«Բուրժուական ինտելիգենցիայի» եւ «ազգային ինտելիգենցիայի» էական քարքերությունն այն է, որ վերջինս, ի դեմս Տերյանի, գգում է եւրոպական չափորոշիչներով ազգային մշակույթ, «հոգեւոր Նայաստան» կերպելու կարեւորությունը:

Նայրնի է՝ Տերյանի «Նոգեւոր Նայաստան» (1914) հոգվածում կարելի է քեսնել «հոգեւոր Նայաստան» եւ «նյութական Նայաստան» հակադրությունը¹⁰. «Չպելք է կամենանք մեր հույսը եւ ապագան «նյութական Նայաստան» գաղափարի վրա հիմնել, այլ պիտի քեսնանք ու աշխարհենք «հոգեւոր Նայաստանի» համար» («Նոգեւոր Նայաստան», էջ 346): «Նոգեւոր Նայաստան» ասելով՝ Տերյանը նկարի ունի «հայության հավարում» կամ «հայության կազմակերպում» գաղափարական իմաստով («Նոգեւոր Նայաստան», էջ 345): Ըստ նրա՝ «նյութական Նայաստանից» խոսափելու համար պելք է հրաժարվել «շքեղ շենքերի հայրենիք դարձնել մեր հայրենիքը» (անդ, էջ 347): Նարկ ենք համարում հիշարակել չիլիացի գրող Գաբրիելա Միստրալի (1889-1956) «Ուսուցչուհու աղոթքը» բանաստեղծության մեջ հեղեյալ քողերը. «Այնպես արա (խոսքը ուղղված է Աստծուն. - S.U.), որ իմ աղյուսե դպրոցը եւս դարձնեմ ոգու դպրոց»¹¹: Անշուշք, այս աղոթքին կմիանար նաեւ Վ. Տերյանը:

Վերը մեջքերված հարվածներից կարելի է եզրակացնել, որ Տերյանը կողմ էր, որ ապագա պելությունը պելք է կառուցվի *հոգեւոր արժեքների* վրա: Կարծում ենք, որ պելությունը կերպվում է ոչ միայն սոցիալական ինտելիքությունների, այլ նաեւ պելության քաղաքացիների հոգեւոր արժեքների հիման վրա. «Ազգը միայն արքաքին ուժերի գորությամբ, իրերի արեեստական դասավորությամբ չի սքեղծվում, այլեւ իր անդամների ներքին մքահոգեկան կապով: Պելք է բացի արքաքին հնավորությունից լինի եւ ներքին մի գորություն, մի հոգեւոր մղում, որ մարդկանց համախմբումը ազգ է դարձնում» («Նոգեւոր Նայաստան», էջ 345):

Այլ խոսքերով ասած՝ ազգային «մենքը» ձեւավորվում է անհարների «մքահոգեկան կապի», արժեքների հիման վրա:

«Նյութական հայրենիքի» պարճառները Տերյանը քեսնում է «գոռոգիկան» ազգասիրության մեջ, ինչի արղյունքն է «այսօրվա հոգեկան-մքավոր սնանկությունը, մեր կուլքուրական թշվառությունը» (անդ, էջ 347): Այսինքն՝ Տերյանը կողմ է, որ ազգի

¹⁰ Այս հակադրության պարմական համարեքսքի մասին քեսն Մ. Սարինյան, Նայ գաղափարաքանություն (Պարմարնական քեսություն), Երեւան, 1998, էջ 80-86:

¹¹ Г. Мистраль, Лирика, М., 1963, с. 198.

նությունը», որ ես էլ շեշտել եմ մի անգամ ևս որին հակադրել եմ «քաղաքացիությունը»: Քանի որ կլինեն այդ արարքին խոչընդոտները, բնականաբար իբր քաղաքացիներ մենք պետք է մաքառենք նրանց դեմ» («Նոգեմոր Նայասարան», էջ 345): Նաքավածը ուշագրավ է նրանով, որ «բուրժուական ինքնիշխանության» (= «ազգայնական ինքնիշխանության») ի վիճակի չէ քաղաքացիական հասարակություն կերպելու: Իսկ «բուրժուական ինքնիշխանության» ապոլիտիզմի մեջ մեղադրելու փաստը հիմք է տալիս մեզ պնդելու, որ Տերյանը կողմ էր «ազգային ինքնիշխանության» քաղաքականացված լինելուն: Նկատենք, որ լինել քաղաքականացված՝ նշանակում է *լինել տարաստիճանային* պետության կերպման, ազգի, ազգային մշակույթի, գրականության սրբազան համար, լինել հասարակության մեջ տեղի ունեցող անարդարությունների բարձրաձայնող, ինչպես Ֆրանսիայում այդ դերը ստանձնում է Է. Զոլան, 1920-ականներին գերմանացի հումանիստ գրողները (Ռեմարկ, Նեսես, Ն. Մանն, Քեսսերներ և այլն): Այս առումով հերաբերքի է թոմաս Մաննի քաղաքական հայացքների կերպարանափոխությունը¹³:

1.5. Մոդեռնացման տերյանական ըմբռնումը (լեզու, մտածողության ոճ, գրականություն)

1.5.1. Լեզուն

Այժմ անցնենք «մենք» ձեռավորող լեզվի խնդրին: Տերյանի ըմբռնումով.

1. «կուլտուրայի ամենագորեղ մղիչն է, մարդու ամենահավաքարիմ ու անդավաճան մխիթարիչն ու սփռփիչը - անխոս բնության, անբարբառ փիեզերքի առջև» («Նայ գրականության գալիք օրը», էջ 319)

2. «կուլտուրայի ամենաճշգրիտ ու անսխալական նշանացույցն է» («Նայ գրականության գալիք օրը», էջ 319)

3. «Լեզուն ժողովրդի հոգու, բնավորության արքանայրիչն է» («Նայ գրականության գալիք օրը», էջ 319)

4. «ամենագորեղ գեներն է մարդու, որովհետև նա միացնում է նրան մյուս մարդկանց հետ, նա է մարդուն անբան անասունից զատողը» («Նայ գրականության գալիք օրը», էջ 334):

Առաջին ձեռակերպման մեջ մենք տեսնում ենք լեզու/բնություն հակադրությունը. լեզուն դառնում է հիմք մշակույթի կայացման համար: Լեզուն առաջնային նշանային համակարգ է, որի հիման վրա ձեռավորվում են երկրորդային նշանային համակարգերը (գրականություն, կրոն և այլն) (Յու. Լոտման):

Տերյանի երկրորդ ձեռակերպման մեջ՝ լեզուն իբրև «նշանացույց», թաքնված կերպով երևում է լեզվի՝ նշանային համակարգ լինելու գաղափարը: Այս գաղափարը բացահայտ (էքսպլիցիտ) կերպով ձեռակերպված է Ֆ. դե Մոսյուրի «Ընդհանուր լեզվաբանության դասընթացում»: Անշուշտ, այսպեղ մեծ է եղել Տերյանի վրա խոշոր լեզվաբան,

13 Նշենք այստեղ միայն, որ Թ. Մաննը 1920-ականներին քաղաքական «կերպարանափոխություններ» է վերապրել: Թ. Մաննի գերմանական ազգայնականության ջախջախությունը հիմք է դառնում հարազատ եղբոր հետ երկար տարիներ գերության մեջ լինելու: Մաննի ազգայնական գաղափարները լավագույնս արարահայրվել են «Ապաքաղաքականացվածի մարդուններ» (1918) հրապարակախոսական գրքում:

«արևելյան Եւրոպայի Սոսյորի»¹⁴ Բոդուեն դե Կուրտենենի (1845-1929)¹⁵ դերը, որը Կազանի լեզվաբանական դպրոցի հիմնադիրներից մեկն էր՝ Կրուշևսկու հետ միասին:

Երբորդ կեպում տեղ գրած տերյանական ձևակերպումը համահունչ է Վիլհելմ ֆոն Նումբոլդի (1767-1835) գաղափարներին: Լեզվի այս ձևակերպումը հիմք է տալիս ասելու՝ լեզուն կարող էր դառնալ միջոց սոցիոլոգիական, ազգագրական վերլուծությունների համար (սոցիոլեզվաբանություն, էթնոլեզվաբանություն):

Չորրորդ ձևակերպումը շեշտում է լեզվի՝ հաղորդակցման միջոց լինելու փաստը, ինչպես նաև կարևորում է կենդանուց-մարդ անցման հնարավորությունը:

Տերյանը «բաց» լեզվի, այսինքն՝ օտարաբանությունների նկատմամբ «անվախ», խնդրի հետ է կապում նաև եւրոպական արժեքների յուրացման գործընթացը: Նա այս խնդրի մասին գրում է. «...ազգային կուլտուրային ձգվելով, այսպես ասած, մենք պետք է նախ դուրս գանք մեր այժմյան կճեպից և ընդգրկենք լայն հորիզոններ: Եւրոպայի հետ սերտ հարաբերության մեջ մտնելով, ընդունելով նոր կուլտուրայի ձեւերն ու բովանդակությունը, մենք բնականաբար պետք է սրելով ենք այդ նոր ձեւերին ու բովանդակությանը համապատասխան լեզու: Այս լեզուն բնականաբար պիտի ընդունն նոր, օտար բառեր, և դա չի վնասի նրան, մինչև որ նա կշարունակե կուլտուրական մի մասսայի լեզու լինել: Ահա թե ինչու ես միանգամայն հակառակ եմ այն փրփրինակ ձեւին, որ ընդունել են մեր Միսիթարյանները և նրանց հետեւելով՝ պոլսահայերը» («Նայ գրականության գալիք օրը», էջ 318): Մեկ այլ մեջբերում՝ «Ազգային լեզվի մաքրության կողմնակիցները դեմ են այդ մեր լեզվի մեջ նոր մուծվող նյութին, նրանք համարում են այդ այլասերում, **միայն ընդունակ ներս առնելու իր մեջ այդ նյութը** և յուրացնելու: Լեզուն ազգի հոգին է, կենդանի է այդ հոգին, կենդանի է այդ ազգը. կենսունակ է առաջինը, ուրեմն կենսունակ է և երկրորդը: Իսկ այդ օտարաբանությունների ներմուծումը ցույց է տալիս, որ լեզուն դեռ կենդանի է և կենսունակ» («Նայ գրականության գալիք օրը», էջ 326): Ինչպես նկատում ենք, ըստ հեղինակի՝ արդիական, բաց, ազատ լեզուն այսպիսով կարևոր դեր պիտի խաղա՝ եւրոպական արժեքաբանական համակարգին ինտեգրվելու առումով:

Ըստ Տերյանի՝ «ազգերի զարգացումն ու առաջընթացը պայմանավորված է փոխադարձ հարաբերություններով, փոխադարձ ազդեցությամբ» («Նայ գրականության գալիք օրը», էջ 326): Եթե թարգմանենք Տերյանի ասածը՝ միջմշակութային հաղորդակցման տեսության «լեզվով», ապա կարող ենք ասել, որ մշակութային երկխոսությունն է ապահովում փոխյալ մշակույթի, նշանային ոլորտի դիմամիկան: Փոխազդեցությունների բացակայությունը կոմսերվացնում է փոխյալ ժողովրդին, մշակույթը, գրականությունը: Այլ խոսքերով ասած՝ Տերյանը կողմ է, որ նշանային ոլորտը (=տեղային մշակույթ) բաց լինի

14 Бодуэн де Куртене, // Онлайн энциклопедия Кругосвет / http://www.krugosvet.ru/enc/gumanitarnye_nauki/lingvistika/BODUEN_DE_KURTENE_IVAN_ALEKSANDROVICH.html - 16.11.2011.

15 Ի դեպ, նշենք, որ տերյանական հոդվածում ասվա է մի վրիպակ. «Դեռ 1812 թ.- գրում է Տերյանը, - ասում է պրոֆեսոր Բոդուեն դե Կուրտենեն...» («Նայ գրականության գալիք օրը», էջ 319): Ինչպես նկատում է ընթերցողը, չէր կարող դե Կուրտենեն 1812 թ. ասել: Կարծում ենք՝ հետագա փայագրություններում հաշվի կառնվի այս հեղինակային կամ հրապարակչական բացթողումը:

այլ նշանային ոլորտների հետ շփման առումով: Պարահական չէ նաև այն փաստը, որ Տերյանը կարևորում է որակյալ թարգմանությունների գործը (Տե՛ս Տերյան, «Անունը կա, ամանումը չկա» («Թռուցիկ նկարադրություններ»), էջ 271-271): Անշուշտ, թարգմանական գրականության առկայությունը ևս զարգացումը նպաստում է միջմշակութային հաղորդակցման ակտիվացմանը, երոպական մշակույթի հետ հայ մշակույթի «երկխոսության» ձևավորմանը: Տերյանի թարգմանության խնդրին անդրադարձել է նաև Մ. Սարգսյանը իր ««Լեզուն ազգի հոգին է»... միաժամանակ ազգային քաղաքականություն է» հոդվածում. «...թարգմանական գրականությունը նախ ապահովում է համաշխարհային ժամանակի, ոգու ներկայություն, հոգևոր բարձրակարգ սնունդ. միով բանիվ՝ օժանդակում է երազնալ-չուշանալուն: Բացի այդ, բնականորեն, ինքնին փոխալ իրականության մեջ ամրակայվում են համամարդկային արժեքները, չափորոնիչները»¹⁶:

Եթե գործիք-լեզուն հնացած լինի, ապա երոպական մշակույթի հետ երկխոսությունը, ըստ Տերյանի, անհնարին կլինի: Գրողի այս դարձությունների հիմքն այն է, որ լեզվի մեջ ծածկագրված է ազգային մրաժողությունը՝ միջնորդավորված է քերականությամբ, շարադասությամբ: Ասվածը ավելի պարզ ներկայացնելու համար՝ բերենք հետևյալ օրինակը՝ «Իբր իբարար իբեց իբին»: Բովանդակային պլանում սա ոչ մի իմաստ չունի, իսկ քերականորեն:

Ազգային մրաժողությունը դրված է ոչ միայն քերականության, շարադասության մեջ (դեմոստրիվ մակարդակ), այլ հարանշանական (կոնտրաստիվ) մակարդակում: Այլ կերպ ասած՝ ազգային մրաժողության ձևավորող գործողությունից են փոխալ լեզվով արտահայտված ու լեզվում պահվող գաղափարները, արժեքները: Այսպիսով, մշակույթների «երկխոսությունը» (=թարգմանությունը) նոր ալիք ու թարմություն կարող է մրցնել բառապաշարի, լեզվամրաժողության, արժեքանական համակարգի փոփոխության առումով:

1.2.2.2. Ոճը

Տերյանը իր «Նայ գրականության գալիք օրը» հոդվածում խոսում է *ժամանակի ոճի* մասին: «Ժամանակակի սրիլը, - գրում է Տերյանը, - ժամանակի մրաժողությունն է: Որչափով որ այդ մրաժողությունը յուրացված է մի ազգի կողմից, այդչափով էլ ազգը կենսունակ է: ...Որչափ որ գորեղ են նրանք (պրոգրեսիվ մրաժողության ներկայացուցիչները, - Տ.Ս.), այնչափ գորեղ է այդ ժողովուրդը իբրեւ գիտակից մի ազգ, իբրեւ կենսունակ ամբողջություն: Որքան հեղափոխ է մի ժողովրդի մրաժողության եղանակը, այնքան հեղափոխ է նրա կյանքը, ուրեմն գուրկ է կենսունակությունից այդ ժողովուրդը: Ահա թե ինչու *ժամանակի սրիլ ունենալ* կնշանակե կենդանի լինել ու կենսունակ, գուրկ լինել այդ սրիլից՝ կնշանակե քնդհակառակը» («Նայ գրականության գալիք օրը», էջ 331): Ասվածից կարող ենք եզրակացնել, որ, ըստ Տերյանի՝ ժամանակակից մրաժողությունը անհրաժեշտ նախապայման է ազգային գոյարևման առումով, ոչ այնքան լեզվի (դեմո-

¹⁶ Մ. Սարգսյան, «Լեզուն ազգի հոգին է»... միաժամանակ ազգային քաղաքականություն է, էջ 68 // Կանթեղ: գիտական հոդվածների ժողովածու, Երևան, թ. 4, 2001.:

փարփվ մակարդակ), որքան արժեքանական, գաղափարական, մշակութային (կոնոփարփվ մակարդակ)¹⁷:

Ի դեպ հեղափոխական է, որ «Ժամանակի սրիլի» բացակայությունը առկա էր նաև 1950-ականների վերջերի պոետների փոքարերում: Այս խնդիրը հարուցում է Պ. Մեակը՝ պայքարելով բանաստեղծական կաղապարների, մրաժողության անազատության դեմ. «Այս «մերի», «հայկականի», - գրում է Պ. Մեակը, - անվերապահ գովերգումը մինչև այսօր էլ մեր բանաստեղծության խոցերից մեկն է: Մասիններն ու Արագածը երև լեզու ունենային՝ վաղուց էին որոտացել. - «Նագի՛սար թողեք մեզ»: Նրագդանը, թերևս, հենց այդպես է անվերջ գոգոգոռում: Այդ են պահանջում նաև երևանյան մարկայի ժամացույցներն իրենց արթնացող զանգով՝ դիմելով այն բանաստեղծներին, ովքեր ամբողջ կյանքում ապրելով քաղաքում, ժամանակի գաղափարը չեն կարողանում անջատել աքաղաղների կանչից: Արբանյակներ են պարփում երկրագնդի շուրջ, իսկ ուրանավորների շարք ժողովածուներում՝ ավանդական ջրաղացաքարը, փոփոխարից նեյտրոններ են պարփաստում, իսկ ուրանավորների մեջ ճռռում է թանգարանային ճախարակը: Այդ ուրանավորների հեղինակներից շարքերը կյանքում *սրիլյազներ* են, իսկ թղթի վրա՝ չուխա-կապա-արխալուղավոր ծերունիներ՝ չիբուխի ծխից ժանգոտած բեղ-մորուքով»¹⁸: Այսպիսով էլ մենք ականապես ենք մեկ ուրիշ շեղումի. բանաստեղծությունները իրենց լեզվաարարականայրջական միջոցներով, մրաժողությամբ չեն համապատասխանում բանաստեղծների արարաքինին, հաբիպուսին, այլ կերպ ասած՝ արարաքինը, հաբիպուսը առաջ է անցնել մրաժողությունից:

Փաստորեն, երոտական չափանիշներով մշակույթ, գրականություն բարենորոգելու համար հարկավոր է ազատ, «բաց», ժամանակին համընթաց բառապաշար, լեզվամրաժողություն ու թարգմանական գործունեության առկայություն:

1.2.2.3. Գրականության

Ժամանակակից մրաժողությունն իր հերթին նպաստում է գրականության թեմատիկ թարմացմանը: Գրականության մոդեռնացումը կարելի է նկարագրել ազգային // համամարդկային, քրեիտային (գյուղական, գավառական) // ոչ քրեիտային (քաղաքային) հակադրության ծիրում: Ինչպես նկատում է ընթերցողը, այս հակադրությունները մենք դուրս ենք բերում հենց փոքրամասնական հողավածներից («Նայ գրականության գալիք օրը», էջ 316):

Տեղյանը հայ գրականության մոդեռնացումը փոխում է եզակիից, «մենքից» ընդհանուրի, «նրանքի», համամարդկայինի անցման միջոցով: Իսկ որպեսզի այս անցումը

17 Այս խնդիրը ամբողջապես այլ մեկնաբանություն է ստանում Մ. Մարգարյանի հոդվածում. ««Ժամանակի սրիլի» կոչվածը» ես, ի վերջո, նշանակում է որ այլ ինչ, եթե ոչ ժամանակի մրաժողություն, որն ինչպիսի դրսևորումներ, ինչպիսի արարահայրջաձևեր, կերպավորումներ էլ ունենա, իրականության որ ոլորտին էլ վերաբերի, *առաջին և վերջին հաշիվով հայրենիում է լեզվի փոխություն: Ժամանակի ոգին արարահայրող հայերենը այն զրահն է, որով պաշտպանվելու է հայի տեսակը* (ընդգծումը մերն է՝ Տ.Ս.)» (Մ Մարգարյան, «Լեզուն ազգի հոգին է»... միաժամանակ ազգային քաղաքականություն է, էջ 65 // Կանթեղ: գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2001):

18 Պ. Մեակ, Երկերի ժողովածու, հ. 3, էջ 131:

յրեղի ունենա, պէտք է թողնել «պրեխային» մտածողությունը, «Երոպան պէտք է արշավի մեր երկրի վրա» («Նայ գրականության գալիք օրը», էջ 331): Իսկ, որպեսզի այս գործընթացը չհանգիստանա, պէտք է «իշխող ազգայնությունը ժխտվի»¹⁹ (անդ, էջ 334): Սա է միակ ճանապարհը «գավառական, կիսա-գյուղական» գրականությունից ազատվելու ուղին (անդ, էջ 333): Սրացվում է, որ ազգայնականը, կղերականը, պրեխայինը՝ հեղափոխության «մենքը» պէտք է ժխտվի: Եւ նոր մոդելի մտավորականության հիման վրա, **նոր** «մենքի» եւ «նրանքի» հարման եզրում զարգանա հայ մշակույթը, գրականությունը, մտածողությունը՝ ժամանակի ոգուն ու ոճին համապատասխան: Նավահաբար Տերյանը մշակույթների երկխոսության այս մոդելը նկարի ուներ: Եթե սա, ապա այս մոդելը ամենաարդյունավետն է, քանի որ մշակույթների սահմանագծին ձեռավորվող երկխոսությունը կարող է արդիականացնել «հեղ ընկած» մշակույթը, մեր պարագային՝ ազգայնական, պրեխային, կիսագյուղական գրականությունը: Բայց այդ երկխոսության կայացման համար հարկավոր են երկխոսությանը պարբերական մտավորականներ: «Ծխական, բուրժուական ինտելիգենցիան» պարբերաբար չէր եւ ի վիճակի չէր նման երկխոսության համար: Երկխոսության ընդունակ է «ազգային ինտելիգենցիան», նոր մոդելի մտավորականությունը, որն արդեն ունի երոպականից իր մեջ, առկա են հարման եզրեր միջմշակութային հաղորդակցման համար: Նման դեպքում չի ձուլվում, մոռացվում «մենքը», այլ մենք մեզ ենք գրում ու կառուցում «նրանքի» աչքերով եւ չափորոշիչներով²⁰:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ Տերյանի առաջ քաշված մշակույթի, գրականության մոդելն իրագրանալու չափորոշիչները լիովին համահունչ են եվրոպականին: Նույնը վերաբերում է նաեւ մտավորականի *պահվածքին*, ինչի մարմնավորողը հենց ինքը Տերյանն է: Պահվածք, որն ենթադրում է *պարասխառնարություն* սեփական մշակույթը բարեփոխելու, ճիգ հայ մշակույթը կերպողների՝ մտավորականների աշխարհայացքը, արժեքականական համակարգը եվրոպականին համապատասխանեցնելու առումներով:

19 Այս մասին րեն **Д.С. Лихачев**, Два типа границ между культурами, с. 97-102 // Он же, Очерки по философии художественного творчества (2-ое изд., доп.), СПб., 1996, / http://likhachev.fond.spb.ru/article100/class_lit/Ocherky/2_tipa_gran.pdf - 30.06.2011):

20 Նկատենք, որ Տերյանի կարծիքով՝ հայ գրականության, մշակույթի երոպականացումը, զարգացումը, պահպանումը Ռուսիայի ծոցում ((«Նայ գրականության գալիք օրը», էջ 334) միայն մի քիչ անհապաղ է: Ինչպես է պարկերացնում Տերյանը հայ մշակույթի երոպականացումը Ռուսիայի ծոցում: Թերեւս, երոպական արժեքները պէտք է ներթափանցեն միջնորդավորված, ժուրնալիստիկ միջոցով: Ռուսերենը այս պարագայում կղաճառ գործիք ռուս եւ համաշխարհային մշակույթը յուրացնելու համար: